Է. Ա. ԶՈՀՐԱԲՅԱՆ. Նախիջևանյան հիմնահարցը (1920–1921), *Երևան, ԵՊՀ հրատ., 2010, 428 էջ:*

Հրապարակի վրա է պատմաբան, պրոֆեսոր Էդիկ Արտեմի Զոհրաբյանի «Նախիջևանյան հիմնահարցը (1920–1921)» արժեքավոր, ծավալուն մենագրությունը, որը նրա երկարատև ու բազմաբեղուն գիտական պրպտումների արգասիքն է:

Հայոց պատմության մեջ կան հիմնահարցեր, որոնց նորովի և ամբողջական լուսաբանման խնդիրը երկար տարիներ սպասել է իր հետազոտողներին: Նախիջևանի հիմնահարցը մեր պատմության հենց այդ կարևորագույն հարցերից է, որն ըստ արժանվույն և գիտատեսական պատշաճ մակարդակով հանգուցալուծվել է Է. Զոհրաբյանի կողմից, որի վրա նա բևեռել է պատմաբանների և առհասարակ ընթերցող հասարակության ուշադրությունը:

Նախիջևանյան հիմնահարցի պատմությանը նվիրված աշխատությունների մեջ այս աշխատանքն իր ինքնատիպ մոտեցմամբ և առաջադրված հարցադրումների հիմնավորվածության առումով առանձնահատուկ տեղ է գրաղեցնում, միաժամանակ գիտնականի Նախիջևանյան հիմնահարցին նվիրված նախորդ աշխատանքի տրամաբանական շարունակությունն է[*]*: Սույն պատմագիտական երկը վաստակաշատ պրոֆեսոր Է. Զոհրաբյանի՝ Նախիջևանյան հիմնահարցին նվիրված ուսումնասիրությունների շարքի երրորդ՝ վերջին ամփոփիչ գործն է, որը գալիս է լրացնելու հայ պատմագիտության մեջ առկա այն էական բացը, որ կա նախիջևանագիտության բնագավառում: Ժամանակագրական առումով այն ընդգրկում է 1920 թ. մայիսից 1921 թ. հոկտեմբերն ընկած ժամանակաշրջանը, որի ընթացքում հայ ժողովուրդը բախվեց մի շարք վճռորոշ իրադարձությունների հզոր մակընթացության հետ: Է. Զոհրաբյանի մենագրությունում համակողմանիորեն բացահայտված է Հայաստանի Հանրապետության կառավարության և կուսակցությունների ռազմավարությունը, ինչը հնարավորություն է տալիս բոլոր նրբերանգներով պատկերացնել ՀՀ առջև ծառացած խնդիրները,*

հայ ժողովրդի պայքարը պետականության ստեղծման ու պահպանման համար հայրենիքի այդ տարածաշրջանում, որը ռազմավարական կարևոր դիրք էր գրավում հարևան պետությունների հետ բազմաբնույթ հարաբերություններում:

Գիտնականի գրչի տակ հմտորեն և բազմակողմանիորեն պատմաքննական անաչառ լուսաբանման են ենթարկվել Այսրկովկասում ընթացած խորհրդայնացման բարդ ու ոչ միանշանակ գործընթացները, լիարժեքորեն և օբյեկտիվորեն երևակվում են Նախիջևանի հիմնահարցում տեղ գտած հետագա զարգացումները և հնարավոր բոլոր կարևոր ելևէջները: Է. Զոհրաբյանը այս աշխատանքում գիտատեսական բարձր մակարդակով բացահայտել է հիմնախնդրի լուծման ուղղությամբ ինչպես Հայաստանի Հանրապետության կառավարության ձեռնարկած միջոցառումները, այնպես էլ առհասարակ այդ ուղղությամբ տարածաշրջանում ընթացած ռազմաքաղաքական և դիվանագիտական գործընթացները: Ընդ որում, տեղին է հատուկ նշել, որ պատմաբանը Հայաստանի համար ռազմաքաղաքական մեծ կարևորություն ներկայացնող Նախիջևանյան հիմնահարցը դիտարկել է հայ-ադրբեջանական, հայ-ռուսական ու հայ-թուրքական հարաբերություններով պայմանավորված համալիր մոտեցումների դաշտում և գործնականում միանգամայն նորովի:

---

[*] *Տե՛ս Էդ. Ա. Զոհրաբյան. Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918 թ. դեկտ.–1920 թ. ապրիլ), Երևան, 2002:*

Օգտագործելով փաստագրական և արխիվային բազմաթիվ վավերագրեր, որոնց մի մասը նոր է գիտական հետաքրքրությունների տիրույթ տեղափոխվել, նա հաջողությամբ ու համակողմանիորեն բացահայտում է հարցի խորքային պատճառահետևանքային կապերը, թե ինչո՞ւ և ինչպե՞ս Նախիջևանյան հիմնախնդրի վճռման տարբերակների որոնումներում այն դուրս մղվեց դիվանագիտական ակտիվ գործառույթների քաղաքական դաշտից, և, ըստ էության, պարզապես տեղափոխվեց բոլշևիկյան Ռուսաստանի ու քեմալական Թուրքիայի հարաբերությունների ոլորտ:

Արդիական մեծ հնչեղություն ունեցող սույն պատմագիտական երկում, հարուստ և բազմազան աղբյուրագիտական հենքի վրա Է. Զոհրաբյանը կարևոր տեղ է հատկացնում Ադրբեջանի խորհրդայնացմամբ պայմանավորված տարածաշրջանում ստեղծված ռազմաքաղաքական նոր իրադրությամբ առաջադրված բարդությունների հիմնախնդիրներին: Պատմաքաղաքական այդ տեսադաշտի վրա էլ պատմաբանի կողմից միանգամայն հմտորեն և նորովի լուսաբանվել են ինչպես Օրջոնիկիձե-Նարիմանով խմբի գործունեությունն ու դրա հետ կապված Մոսկվայի դիրքորոշումը, այնպես էլ հարակից մի շարք հարցեր: Է. Զոհրաբյանը սկզբունքային քաղաքական-պատմագիտական հիմնավորված գնահատական է տվել Լ. Շանթի առաքելությանը և հիմնավորապես արժեքավորել հայ-ադրբեջանական տարածքային վեճերի խնդիրը Մոսկվայի հայ-ռուսական բանակցություններում, միաժամանակ բացահայտել ադրբեջանական խարդավանքներն այդ ուղղությամբ, որի նպատակն էր սադրիչ գործողություններով ձախողել հայ-ռուսական երկխոսության հնարավոր դրական զարգացումների ընթացքը (էջ 9-11, 12-23, 24-48):

Այդ ամենին համընթաց, Է. Զոհրաբյանի կողմից բազմաբնույթ կտրվածքով բացահայտվել է ՀՀ կառավարության քաղաքական-ղեկավար շրջանների մոտեցումների սնանկությունն այն խնդրում, որ իբր թե Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատմամբ, ելնելով բոլշևիկյան «լուսաշող և հուսադրող» հայտարարագրերից, տեղի կունենան արմատական փոփոխություններ ադրբեջանական կողմի քաղաքական վարքագծում ու Հայաստանի Հանրապետության համար խիստ անհրաժեշտ քաղաքական լուծումների և հնարավոր փոխզիջումների մի շարք հարցերում՝ հանգուցալուծելով նաև Ղարաբաղ–Զանգեզուր կնճռոտ հիմնախնդիրը: Միաժամանակ մենագրության մեջ կարևոր անդրադարձ է կատարվել Հայաստանի Հանրապետության համար այդ դժվարին օրերին ՀՀ ադրբեջանաբնակ խառվարարական տրամադրություններով համակված շրջանների հնազանդեցման անհրաժեշտության խնդրին 1920 թ. հունիս–հուլիս ամիսներին, որի հետևանքով հայկական զորքը մտավ Զանգիբասար–Վեդիբասարի և այլ շրջանները ու վճռական գործողություններով վերահաստատեց օրինական իշխանությունն այդ տարածքներում: Ռազմաքաղաքական այդ իրադարձությունների լուսաբանումը կատարվել է Անդրկովկասից բրիտանացիների հեռացումից հետո քեմալա-բոլշևիկյան ազդեցության ձևավորման համայնապատկերի հետ կապակցված, ինչպես նաև գործնական հողի վրա ներկայացվել է Անդրկովկասի փաստացի բաժանման խնդիրը (էջ 48-77): Պատմաբանը ցույց է տվել ՀՀ կառավարության Ղարաբաղ–Զանգեզուրի հակամարտությունում ադրբեջանական կողմի վստահության պատճառահետևանքային արմատները, եզրահանգելով, որ դա գալիս էր այն վստահությունից, որ բոլշևիկյան զորուժը ցանկացած պարագայում ՀՀ հետ խնդիրներում կդիմի պարտադրանքի և ռազմաքաղաքական ճնշման բոլոր լծակների օգտագործմանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության, ինչը բխում էր Մոսկվա–Անկարա շահերի ներդաշնակությունից: Առաջին գլխի վերջում Է. Զոհրաբյանը հիմնարար եզրակացությունների է հանգել Ադրբեջանի խորհրդայնացումով պայմանավորված հարցերի խնդրում՝ կանոնելով քեմալա-թուրքական համաձայնության հետևանքները: Հեղինակն ըստ ամենայնի կարևորում է հայ-ռուսական բանակցություններում Մոսկվայի վերջնագրային մոտեցման պատճառները, միանգամայն ի-

բատեսորեն արժևորում է Լ. Շանթի պատվիրակության գործունեության արդյունքները: Է. Զոհրաբյանը կարևոր եզրահանգում է անում այն մասին, որ խորհրդային Ադրբեջանի քաղաքականության մեջ խորհրդայնացման փաստը, ըստ էության, արմատական փոփոխություններ չմտցրեց, այլ ընդամենը տեղի ունեցավ զգեստափոխություն, իսկ արդյունքում նոր ադրբեջանական բոլշևիկյան կառավարությունը շարունակեց իր նախորդների՝ մուսավաթականների հակահայկական ուղղվածության քաղաքականությունը (էջ 78–80):

Ելնելով առաջադրված հարցադրումներից՝ Է. Զոհրաբյանը մենագրության առանցքային հարցերի տիրույթում պատմաքննական խոր և սկզբունքային վերլուծության առարկա է դարձրել Նախիջևանյան հիմնախնդրի քննարկումները Մոսկվայի 1920 թ. հայ-ռուսական և ռուս-թուրքական բանակցություններում, ինչպես նաև Թիֆլիսի օգոստոսի 10-ի հայ-ռուսական հայտնի համաձայնագրում՝ բացահայտելով նոր և հետաքրքիր քաղաքական մոտեցումների նրբերանգներ: Այդ համատեքստում հեղինակը մանրամասն և նորովի անդրադարձ է կատարել վիճելի տարածքների խնդրում Ս. Օրջոնիկիձեի ու Ադրբեջանի կառավարության տարբեր մոտեցումներին, կարևոր տեղ հատկացրել Հ. Օհանջանյանի կառավարության դիրքորոշմանը հայ-ռուսական բանակցություններում, ինչպես նաև բացահայտել է անգլո-ֆրանսիական կողմի դժգոհությունների իրական պատճառները Ռուսաստան–Հայաստանի Հանրապետության փոխհարաբերություններում: Համակողմանի ներկայացվել են կռիվները Զանգեզուրում, հիմնավորված վերլուծվել է ռազմաքաղաքական զարգացումները Շարուր–Նախիջևանի խնդրում: Արվել են եզրակացություններ, որոնք խորքային բացահայտումների են գնում տարածավեճերում ՀՀ ձեռք բերած քաղաքական արդյունքների խնդրում (էջ 81-92, 92- 114, 114- 140-148):

Հենվելով բազմաթիվ կարևոր արխիվային և այլ փաստաթղթերի վրա՝ Է. Զոհրաբյանը հայ պատմագիտության մեջ առաջին անգամ ուշադրությունը բևեռել է իր իսկ կողմից նախկինում հիմնավոր հետազոտված 1920 թ. թուրք-հայկական պատերազմի մեկ այլ, բոլորովին չհետազոտված ասպեկտի, այն է՝ տվյալ ժամանակահատվածում Նախիջևան–Շարուրի ճակատում տեղի ունեցած ռազմական իրադարձություններին: Համակողմանի բացահայտված է Ադրբեջանի ղեկավարության, Ստալինի վարքագիծը պատմաքաղաքական այդ իրադարձությունների ժամանակ, ինչպես նաև ըստ արժանվույն գնահատվել է Գ. Չիչերինի մոտեցումը տարածաշրջանային խնդիրներում: Նա դիտարկել է Շարուր–Նախիջևանի հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետության համար աղետալի Ալեքսանդրապոլի պայմանագրի համատեքստում՝ ցուցաբերելով քննախույզ մոտեցում, միաժամանակ պատմաբանների և ընդհանրապես ընթերցողի ուշադրությունը հրավիրելով նախկինում անտեսված մի շարք հարցադրումների վրա, այդ թվում պատմաքննական բարձր մակարդակով ներկայացնելով թուրքական դիվանագիտության նպատակադրումները Սևրի պայմանագրից Հայաստանի հրաժարեցման թուրքական ռազմավարության խնդրում, միաժամանակ մեջբերելով հայկական պատվիրակության ղեկավար Ալ. Խատիսյանի կողմից ներկայացված քարտեզը, թուրքական հակաառաջարկները և կարևոր այլ հիմնախնդիրներ, ինչից գործն ավելի է շահել, ավելի անխոցելի է դարձել արված արժեքավոր և գործնականում համակողմանիորեն հիմնավորված եզրահանգումների տեսանկյունից (էջ 149-220):

Է. Զոհրաբյանի աշխատանքի երկրորդ մասը նվիրված է Շարուր–Նախիջևանում առկա իրավիճակի բացահայտմանը արդեն խորհրդային իշխանության հաստատման առաջին ամիսներին, ըստ այդմի հանգամանալից ներկայացված է Խորհրդային Ադրբեջանի հռչակագիրը Ղարաբաղ–Զանգեզուրի և Նախիջևանի հիմնախնդրում ու դրա հետամտած իրական նպատակները: Աշխատության մեջ հեղինակը արժանի ուշադրություն է դարձրել Շարուր–Նախիջևանում 1920–1921 թթ. հրահրված ադրբեջանա-թուրքական մեքենայություններին և սադրիչ գործողություններին (էջ 223-269), որոնց նպատակը մեկն է եղել՝ ամեն կերպ ձախողել Նախիջևան-

յան հիմնախնդիրը հօգուտ հայերի լուծելը, խոչընդոտել վերջինիս վերամիավորումը մայր հայրենիքին: Մենագրության մեջ մեծ նշանակություն է տրվել Նախիջևանյան հիմնահարցի ադրբեջանամետ հանգուցալուծման խորքային ու իրական պատճառների բացահայտմանը Մոսկվայի և Կարսի կոնֆերանսներում:

Քննարկված բոլոր հարցերին զուգընթաց՝ Է. Զոհրաբյանը աշխատանքում կարևոր տեղ է հատկացրել Նախիջևանյան հիմնախնդրում Հայհեղկոմի բռնած քաղաքական դիրքորոշումներին, բազմաթիվ փաստերի արդյունավետ շրջանառմամբ հիմնավոր ապացույցներ բերելով, որ դրանք եղել են անողնաշար, անվճռական մոտեցումներ և, ըստ էության, որոշակի, ինչը ևս նպաստել է հիմնախնդրի հայանպաստ լուծման ձախողմանը:

Մանրամասն և բազմակողմանիորեն լուսաբանված է դիվանագիտական-քաղաքական պայքարը, որ ծավալվել է Նախիջևանյան հիմնահարցի շուրջ Մոսկվայի ռուս-թուրքական և Կարսի թուրք-անդրկովկասյան կոնֆերանսներում: Այդ կապակցությամբ կարևոր տեղ է հատկացվում Լեգրանի դիրքորոշմանը Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև Հայաստանի փաստացի բաժանման խնդրում: Հեղինակը քննախույզ հայացքով ոչ միայն վեր է հանում Ստալինի, Օրջոնիկիձեի, Կիրովի դիրքորոշումները Նախիջևանի պատկանելիության խնդրում, այլև տալիս է, հիրավի, անկողմնակալ, վերկուսակցական և սկզբունքորեն անաչառ գնահատականներ նրանց մոտեցումներին՝ հիմքում դնելով իրական պատմագիտական փաստեր և պատճառահետևանքային խորքային վերլուծությունների արդյունքներ (էջ 269- 282, 282-293, 351-407 և այլն): Առհասարակ, Է. Զոհրաբյանն իր բոլոր աշխատություններում ապացուցում է, որ ինքը պատկանում է պատմաբանների այն փաղանգին, որոնք իրենց առջև դրված հարցերի ուսումնասիրության բնագավառում գնում են մինչև հնարավորինս ավարտուն հանգուցալուծման: Դա էլ թույլ է տվել նրան անելու կարևոր եզրահանգումներ Հայաստանի Հանրապետության ճակատագրի մասին, այդ թվում՝ Նախիջևան–Շարուրի խնդրում քեմալա–բոլշևիկյան շահավետ, երկուստեք ձեռնտու համագործակցության աշխարհաքաղաքական կործանարար հետևանքների գնահատման ստալինյան դիրքորոշումների պարզաբանման հետ կապված: Միաժամանակ ներկայացված է նաև Անտանտի երկրների իրական դիրքորոշումը իրենց կրտսեր դաշնակից Հայաստանի Հանրապետության քաղաքական ճակատագրի նկատմամբ:

Կարծում ենք, որ պատմաբան Է. Զոհրաբյանին հաջողվել է ստեղծել պատմագիտական արժեքավոր մի աշխատություն, որում հարուստ աղբյուրագիտական հենքի վրա ցույց է տրված Շարուր–Նախիջևանի հիմնախնդրի փոխակերպումների ողջ ընթացքը թե՛ Հայաստանի առաջին հանրապետության արտաքին քաղաքականության համատեքստում (1920 թ. մայիս-դեկտեմբեր ժամանակահատվածում) և թե՛ թուրք-բոլշևիկյան հարաբերությունների քաղաքական դաշտի տիրույթներում (1920 թ. դեկտեմբեր–1921 թ. հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում): Արդյունքում, լիարժեք ներկայացված է Այսրկովկասի քաղաքական այն նոր քարտեզը, որն ստացվեց քեմալա–բոլշևիկյան 1920-1921 թթ. սահմանագծային վերաձևումների և քաղաքական ձեռնածությունների հետևանքով: Հմտորեն պարզաբանվում է նաև թուրքական դիվանագիտության ողջ ձեռնարկումները Սևրյան գործընթացների արգելափակման գործում: Մանրամասն և ամբողջական ներկայացված են Նախիջևանի երկրամասի բաժանման, անդամահատման վերաբերյալ կայացված որոշումները Կարսի կոնֆերանսում, որոնց հիման վրա արված են իրատեսական գնահատումներ:

Համոզված ենք, որ Է. Զոհրաբյանի այս մենագրությունն իր միանգամայն արժանի տեղը կգտնի պատմաբանների, միջազգայնագետների և լայն ընթերցողների շրջանում:

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ